ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

0004, Երևան, Ծովակալ Իսակովի պող. 29 Հեռ. /010/ 77-81-22

№ 21/14-1037 «30» 07 2019թ.

«Սաբրի» ՍՊԸ-ի տնօրեն Գ.Մնացականյանին

Հասցե՝ ք.Երևան, Նոր-Արեշ 44փ. 31/1

(ՀՎՀՀ 04216349)

Հարգելի՛ պարոն Մնացականյան.

«ՀՀ ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի և «Սաբրի» ՍՊԸ-ի միջև 15.05.2019թ. կնքված ՀՀ ՈԿ ԳՀԱՇՁԲ-19/2-1 ծածկագրով պայմանագրի համաձայն Ձեր կողմից պետք է իրականացվեր Պայմանագրի Հավելված 1-ով նախատեսված ՀՀ ոստիկանության կրթահամալիրի էլեկտրական ենթակայանների և թիվ 1 կաթսայատան սարքերի տեղադրման և նորոգման աշխատանքները:

Պայմանագրի 1.3 կետի և Հավելված-2-ով սահմանված օրացուցային գրաֆիկի համաձայն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը սահմանված էր 60 օրացուցային օր, որն ավարտվել է 13.07.2019թ.:

Ձեր կողմից 26.07.2019թ. ներկայացվել է կատարողական ակտեր, ընդունման-հանձնման արձանագրություններ պայմանագրով նախատեսված աշխատանքների մասնակի կատարման վերաբերյալ և հարկային հաշիվներ 1.219.411 և 941.124 դրամ գումարի չափով:

Փաստորեն, ստանձնած պարտավորությունների պայմանագրային արժեքի 19.560.000 ՀՀ դրամից պակաս աշխատանք է կատարվել 17.399.465 ՀՀ դրամի չափով, ինչպես նաև 13 օրացուցային օրով խախտվել է աշխատանքների կատարման ժամկետը:

Հիմք ընդունելով պայմանագրի 3.1.4 կետի «բ» ենթակետի պահանջները՝ «ՀՀ ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ը միակողմանի լուծում է պայմանագիրը:

Տեղեկացնում ենք, որ «Սաբրի» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900018005018 հաշվեհամարին փոխանցել 97.800 ՀՀ դրամ, որպես տուգանք՝ պայմանագրի 6.3 կետի համաձայն (պայմանագրի 5.1 կետում նախատեսված պայմանագրի գնի 0.5%) և 113.096 ՀՀ դրամ, որպես տույժ՝ պայմանագրի 6.2 կետի համաձայն (յուրաքանչյուր ուշացված օրվա համար կատարման ենթակա, սակայն չկատարած աշխատանքի գնի 0,05% չափով):

Միաժամանակ հիմք ընդունելով Ձեր կողմից 29.05.2018թ ներկայացված տուժանքի մասին համաձայնագրի (պայմանագրի կատարման ապահովում) 1.3 կետը՝ տեղեկացնում ենք, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900018005018 հաշվեհամարին ենթակա է գանձման 1.956.000 ՀՀ դրամը որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովում (պայմանագրի ընդհանուր գնի 10%):

ՊԵՏ, ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ՝ Մ.ԲԱԲԱՅԱՆ

Կատարողներ՝
Ս.Մկրտչյան Է.Հակոբյան
010.77-08-79